

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ.

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱՆԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

03.07.2017թ.

30.06.2017թ.-ին Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում

Նախագահությամբ՝ համայնքի ղեկավար Ա. Ղազարյանի

Քարտուղարությամբ՝ աշխատակազմի քարտուղար Ն. Պետրոսյանի

Մասնակցում էին՝ ավագանու անդամները, համայնքապետարանի աշխատակազմը, մանկավարժներ, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցները, արվեստի դպրոցի և մանկապարտեզի աշխատակիցները և համայնքի բնակիչները:


Լսեցին Վերին Արտաշատ համայնքի ղեկավար Ա.Ղազարյանի հաշվետվությունը 2017թ. 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին :

Արձանագրվեց, որ 2017թ. 1-ին կիսամյակում համայնքապետարանի կողմից համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները .

- Համայնքապետարանը բնակիչներից ստացել է 130 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի սոցիալական հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստերի, ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ :
- Համայնքապետարանը ստացել է պաշտոնական նամակներ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, որոնք քննարկվել են սահմանված ժամկետներում և տրվել են պատասխաններ :
- Բնակիչներին տրվել է 389 տեղեկանք :
- Քաղաքացիների գրավոր և բանավոր դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման և սահմանների ճշտագրման աշխատանքներ :
- 2017թ. Բյուջեի սեփական եկամուտները, որոնք կազմում են տարեկան 102769.5 հազ. դրամ, մուտքագրվել է 41336.9 հազ. դրամ, որը կազմում է սեփական եկամուտների 40.2 %-ը : Ըստ առանձին հարկատեսակների եկամուտները կազմել են՝
 1. Հողի հարկ՝ պլան –21793.4 հազար դրամ փաստացի կատարվել է 4604.6հազ. դր.կամ 21.1 %
 2. Գույքահարկ փոխադրամիջոցներից՝ պլան – 13010.0 հազար դրամ փաստացի կատարվել է 4816.2 հազ.դրամ կամ 37 %
 3. Գույքահարկ շենքերի համար՝ պլան- 1007.6 հազար դրամ փաստացի կատարվել է 156.3 հազար դրամ կամ 15.5 %
 4. Տեղական տուրք՝ պլան – 762.0 հազար դրամ փաստացի կատարվել է 335.1 հազար դրամ կամ 43.9%

5. Հողի վարձակալություն՝ պլան – 1402.5 հազար դրամ փաստացի կատարվել է 583.6 հազար դրամ կամ 41.6 %
 6. Այդ թվում գյուղ նշանակության՝ պլան – 292.5 հազար դրամ փաստացի կատարվել է 68.6 հազար դրամ կամ 23.4 %
 7. Ծնողական գումար՝ 4770.0 հազար դրամ փաստացի կատարվել է 1006.2 հազար դրամ կամ 21%
 8. Դոտացիա՝ պլան – 57890.1 հազար դրամ փաստացի կատարվել է 28945.1 հազար դրամ Սուրվենցիա՝ պլան 2133.9 հազար դրամ փաստացի կատարվել է 889.8 հազար դրամ
 9. Ոնթացիկ դրամաշնորհներ՝ պլան – 7215.3 հազար դրամ փաստացի կատարվել է 7215.3 հազար դրամ կամ 100 %
- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ տնտեսական միջոցառումներ և ծրագրեր , որոնցից են՝
Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 1732000 դրամ ֆինանսական օգնություն :
Մահացածների ընտանիքներին տրվել է 340.0 հազար դրամ ֆինանսական օգնություն :
Վերին Արտաշատի մարզիկներին մրցումների մասնակցության համար տրվել է 60000 դրամ ֆինանսական օգնություն :
Միջնակարգ դպրոցին տրվել է 100.0 հազար դրամ ֆինանսական օգնություն :
 - Մշտապես կատարվում են սան. մաքրման աշխատանքներ՝ համայնքի տարածքից մաքրվել են աղբավայրերը : Համայնքում ըստ գործող գրաֆիկի կատարվում է փողոցների աղբահանությունը :
 - Համայնքի Արարատյան , Հախնազարյան , Թամանյան , Երևանյան և Շահումյան փողոցներում մշտապես առկա է գիշերային լուսավորություն :
 - Կատարվել է համայնքի ,, Լուսնթագ ,, մանկապարտեզի բակի մասնակի վերանորոգման աշխատանքներ , որի արդյունքում համայնքի իր սեփական բյուջեից ծախսել է 800.0 հազար դրամ :
 - 2017թվականին Վերին Արտաշատ համայնքի մշակույթի տան բարեկարգում է կատարվել 1600.0 դրամ ընդհանուր արժեքով : Կատարվել է ծառատունկ , որի համար գնվել են մշտադալար ծառեր 600.0 հազար դրամ : Համայնքում տեղադրվել է հուշաքար –խաչքար , որի բացմանը մասնակցել են Արարատի մարզպետը , այլ բարձրաստիճան պաշտանյաներ , ինչպես նաև համայնք իրավիրված հյուրեր և համայնքի բնակիչներ :

Վերին Արտաշատ համայնքի ղեկավար



Ա.Ղազարյան